Նախագահը Ս. Վրացեանից քվէարկելու համաձայնութիւն ստանալով՝ առաջարկում է խորհրդարանին քվէատուփերով անցնել դաղտնի քվէարկութեան։ Քվէարկութեան արդիւնքը լինում է հետևեալը. — Քվէարկած մէկ թեկնածու Ս. Վրացեանը ստանում է 34 սպիտակ քվէ, ոչ մի սև, ձեռնպահ մէկը։

Նախագահը յայտարարում է քվէարկութեան արդիւնքը, որ 34 ձայնով խորհրդարանը նախարարապետ է ընտրում Ս. Վրացեանին։ Պատգամաւորների կողմից ծափահարութեամբ ողջունւում է նրա ընտրութիւնը։ Խօսք է տրւում նորընտիր վարչապետ Ս. Վրացեանին։

Ս. Վրացեան. — Ես գիտակցում եմ, թէ քաղաքական այս ծանր պայմաններում խորհրդարանն ինչպիսի ծանր բեռ է դնում իմ ուսերին։ Իմ կազմելիք կառավարութեան կազմը յաջողութիւն կունենայ, եթէ երկիրը և Հայաստանի դերագոյն օրէնսդրական մարմինը լինեն նրա հետ։ Ես հաւատացած եմ, որ ձեր և երկրի աջակցութեամբ կը յաջողւի մեզ տաղնապալի այս վիճակից դուրս դալ պատւով։ Իմ կողմից ես խոստանում եմ թափել ամէն ճիդ և ոչինչ չխնայել մեր հանրապետութեան բարդաւաճման համար։ Խնդրում եմ 24 ժամ միջոց տալ՝ կառավարութեան կազմը ձեզ ներկայացնելու համար։

Խորհրդարանը համաձայնութիւն է տալիս։ Նիստը յայտարարւում է փակւած՝ յաջորդ օրւան թողնելով շարունակութիւնը։

Նիստը բացւում է նոյեմբ. 24-ի երեկոյեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Նախագահում է Յովհ. Քաջազնունին։

Նախագահ. — Երէկւայ արտակարդ նիստի շարունակութիւնը յայտարարում եմ բացւած։

Հայաստանի խորհրդարանի պատգամաւորներ, նախագահութիւնը նախարարապետ Ս. Վրացեանից այսօր ստացել է կառավարութեան կազմի անուանացուցակը։ Նոր կազմը հետևեալն է. նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացեան, զինուորական նախարար՝ Դրաստամատ Կանայեան, ֆինանսների՝ Համբարձում Տէրտէրեան, Արդարադատութեան՝ Արշամ Խոնդկարեան, գիւղատնտեսութեան, պետական գոյքերի և աշխատանքի՝ Արշակ Յովհաննիսեան, հանրային կրթութեան և արուեստի՝ Վահան Մինախորեան, ներքին, խնամատարութեան և հաղորդակցութեան նախարարների պօրտֆէլներն առայժմ ազատ են և ժամանակաւորապէս յանձնւած են հետևեալ կերպ. ներքին գործերի՝ ինքը նախարարապետը, խնամատարութեանը՝ ֆինանսների նախարար Հ. Տէրտէրեան և հաղորդակցութեանը՝ արդարադատութեան նախարար Արշ. Խոնդկարեան։

Կառավարութեան նոր կազմի յայտարարելը ընդունւում է ծափահարութեամբ։

Նախարարապետ Ս. Վրացեանը կառավարութեան անունից անում է հետևեալ դեկլարացիան.

Տարապայման դժւարին ժամանակներում է կեանքի կոչւում ներկայ կառավարութիւնը։ Տաճիկ զինւած ուժերը դրաւել են մեր երկրի խոշոր մասը։ Ազգաբնակութիւնը դրաււած վայրերից տեղահան է եղած և դպթական վիճակի մէջ անխնայ կոտորւում է ցրտից և սովից։ Պետութեան ներքը կեանքի բնականոն ընթացքը խանդարւած է։ Վարչական մեքենան թուլացած է մեծապէս, ֆինանսական և հաղորդակցութեան միջոցները՝ քայքայւած, արդարադատութիւնը՝ անհնարին վիճակում, պարէնի մուտքը դրսից կանգ է